

# Մոնա Աղեկյան «Անարդարության հանդեպ չեմ կարող անտարբեր լինել»



«Մենք փորձելու ենք լցնել մեր քաղաքը մարդկային ջերմությամբ...», – այսպիսի նպատակադրմամբ է մասնակցում Երևանի ավագանու ընտրություններում «Երկիր Ծիրանի» կուսակցության ցուցակի 3-րդ հորիզոնականում ներկայացված Մոնա Աղեկյանը: Ծնվել է 1980թ. Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է «Մխիթար Գոշ» համալսարան, այնուհետև շարունակել է ուսումը «Ինտերլինգվա» լեզվագիտական համալսարանում՝ ստանալով մանկավարժության բակալավրի աստիճան /անգլերեն լեզու/: Աշխատել է միջնակարգ, հիմնական դպրոցներում որպես անգլերենի ուսուցիչ, նաև որպես լրագրող, սրբագրիչ: 2016թ. օգոստոսին հիմնել է «Արևելյա» մանուկների զարգացման կենտրոնը: Ամուսնացած է, ունի երկու դուստր:

**-Ինչու՞ որոշեցիք ավագանու ընտրություններում առաջադրվել որպես թեկնածու:**

– Բնույթով այնպիսին եմ, որ անարդարության հանդեպ չեմ կարող անտարբեր լինել ու սպասել, որ ինչ-որ մեկն իմ փոխարեն քայլ կանի արդարությունը վերականգնելու կամ ծառայած խնդրին լուծում տալու համար: Ցավոք սրտի, մեր կյանքում այսօր այնքան շատ են այդ անարդարությունները, որ գերիշխում են արդեն: Հասկանում ես, որ լինելով քաղաքացի իրավունք չունես աչքերդ փակելու կամ ջայլամի քաղաքականություն վարելու: Միայն քաղաքականության միջոցով կարող ես ազդեցություն ունենալ սխալ որոշումների վրա: Ես երկու երեխաների մայր եմ և ամեն ինչ անելու եմ, որ երեխաներս՝ բոլորիս երեխաներն ապրեն հնարավորինս արդար, հնարավորինս կիրթ, և որ ամենակարևորն է՝ քաղաքակիրթ կյանքով: Սրանք են պատճառներից հիմնականները, հանուն որոնց որոշեցի առաջադրվել Երևանի ավագանու ընտրություններում որպես թեկնածու:

**-Երևանի կառավարման համակարգում ի՞նչ բացթողումներ եք նկատում:**

– Բացթողումները բազմաբնույթ են և հենց այդ բացթողումների արդյունքում է, որ այսօր բոլորս բողոքում ենք մեր ամեն ինչից, ամեն քայլափոխի, ամենուր լսում ենք մեր քաղաքացիների բողոքները: Բարձրի թողի է կրթությունը. ամեն օր շփվում եմ և՛ նախադպրոցական, և՛ դպրոցական տարիքի երեխաների հետ և ամեն անգամ ցավով փաստում, որ ամեն ինչ արվում է միայն ստուգումների ժամանակ մաքուր երևալու, վերևների աչքին հաճոյանալու համար:

Իսկ ի՞նչ վիճակում է մանկապարտեզը, ուր ընտանիքից հետո առաջին անգամ ապագա քաղաքացին շփվում է աշխարհի ու իր հասակակիցների հետ. խոնավ, 60 –ականներից առ այսօր վերանորոգման կարոտ: Բոլոր մանկապարտեզներն ունեն մասնաշենքեր, որոնք չեն ծառայում իրենց նպատակին՝ անմխիթար վիճակում գտնվելու պատճառով: Եվ պատկերացնում եք. հղի կինն իր դեռ չծնված երեխային հերթագրում է մանկապարտեզ հաճախելու համար, սպասում մինչև երեխան դառնում է դպրոցական, դպրոց գնում, սակայն նրա հերթն այնպես էլ չի հասնում: Ասեմ նաև, որ բազմաթիվ դաստիարակներ ու դայակներ կապահովվեն աշխատանքով, եթե այդ արհամարհված վիճակում գտնվող մասնաշենքերը վերանորոգվեն և օգտագործվեն ըստ իրենց նշանակության:

Կարևոր խնդիրներից է հանրային տրանսպորտի վիճակը. միայն այն, որ ուղևորը քաղաքի մի ծայրից մյուս ծայր է տեղափոխվում կրկնակի ծավված և ստորացուցիչ հանգամանքներում, կարծում եմ, քաղաքի իշխանության ուղևորների հանդեպ արհամարհական վերաբերմունքի բավականին խոսուն փաստ է: Շատ արագ անհրաժեշտ համալիր լուծումներ տալ կարմիր գծանշումների, ավտոկայանատեղիների և ճանապարհատրանսպորտային խախտումների վերահսկողության վերաբերյալ: Բազմաթիվ են խախտումների ոչ իրավաչափ պատժամիջոցները, որոնք հարկ է վերանայել...

**–Շատ է խոսվում Երևանի համայնքային բյուջեի ոչ արդյունավետ ծախսման վերաբերյալ: Ի՞նչ փոփոխություններ եք նախատեսում այս ոլորտում:**

-Կարծում եմ, մեր կյանքն ու փաստերն են ցույց տալիս, որ մայրաքաղաքի բյուջեն արդյունավետ չի ծախսվում: Համոզված եմ , որ մեր բյուջեն ունի հնարավորություն, որպեսզի քաղաքի ամենաառաջնային խնդիրներն իսպառ վերանան և ստանան իրենց երկար սպասված լուծումները: Դրա համար համակարգային փոփոխություններ են պետք...

**– Որքանով է հարմար Երևանը ընտանեկան հանգստի, մանկական ժամանցի կազմակերպման տեսակետից:**

– Մանկական ժամանցի վայրերը թեկուզ միջին աշխատավարձով ապրող քաղաքացու համար չափազանց թանկ են, նույնը կասեմ նաև ընտանեկան ժամանցի վայրերի վերաբերյալ:

Այնպես որ, մանկական ժամանց հնարավոր է կազմակերպել, եթե երեխայի ծնողն այդ ամիս ստացել է իր աշխատավարձը եւ կարողացել է հոգալ այդ ամսվա երեխայի բոլոր մյուս կենսական պահանջները:

**-Մայրաքաղաքի զարգացման Ձեր տեսլականը:**

– Երևանը արևի, ջերմության քաղաք է և պետք է լինի հոգատար ձեռքերում: Կինը՝ մայր լինելով, լավագույնս կարող է իր զավակի նման հոգատարություն ցուցաբերել նաև իր քաղաքի նկատմամբ: «Երկիր Ծիրանի» կուսակցությունը մարդկային ջերմությամբ է լցնելու մեր քաղաքը և այդպիսի մթնոլորտում մեզ հուզող խնդիրներն իրենց լուծումներն էլ շատ կարճ ժամանակում կստանան: Երևանը համայն հայության մայրաքաղաքն է և պետք է լինի հարմար իր բնակիչների եւ գրավիչ իր հյուրերի համար՝ հնամյա, քաղաքակիրթ ու կրկին վերդառնալու կանչող քաղաք:

**–Բայց քաղաքականությունը Հայաստանում դա «տղամարդկանց աշխարհ» է: Ի՞նչ դեր է վերապահված կնոջը, որքանով է Հայաստանում օգտագործվում կանանց ներուժը քաղաքական գործընթացներում:**

– Համամիտ եմ, բայց կարծում եմ, արդեն եկել է ժամանակը, որ կինը, հայ կինը ներգրավվելով քաղաքականության մեջ, օգնի իր երկրի խնդիրները լուծելուն: Չէ՞ որ ընտանիքը կանգուն է, եթե կինն ուժեղ և իմաստուն է, հակառակ դեպքում ընտանիքը քայքայվում է: Այսպես է նաև քաղաքականության մեջ, կինն է այն հենասյունը, որի վրա պետք է կառուցել մեր երեխաների ապագան: Եվ փաստենք նաև, որ «Երկիր Ծիրանի» կուսակցության առաջնորդը այն կին քաղաքական գործիչներից է, ով իր անձը, անձնական շահը մի կողմ դնելով, պայքարում է երկրում տիրող անարդարությունների դեմ, բարձրաձայնում բոլորիս հուզող խնդիրները, և իր կեցվածքով և անցած քաղաքական կյանքով բազմիցս ապացուցել է կնոջ դերի կարևորությունը հայկական քաղաքականության մեջ: Մի խոսքով՝ Երևանին անհրաժեշտ է մայրական հոգածություն և մարդկային ջերմություն: Մենք փորձելու ենք լցնել մեր քաղաքը մարդկային ջերմությամբ...

*Զրուցեց Տաթևիկ Մարգարյանը*

*28.04.2017*

**Նյութի աղբյուրը՝ [www.womennet.am](http://www.womennet.am)**

<http://www.womennet.am/%D5%BD%D5%B8%D5%B6%D5%A1-%D5%A1%D5%B2%D5%A5%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A5%D5%BA-%D5%B9/>